

# ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

Կ. ՅՈՒՆՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ. ԹԱՐԻՄԱՆՈՒԹԻՒՆ Լ. ԱՐՄԵՆԻ Վ. ԲԱԿՐԱՅՈՒՆՆՈՅ:

Այս գիրքը զոր կ'ընծայեմք մերազնեայ բանասիրաց, հոռովմէական աշխարհահըռչակ կայսեր Գաղղիացոց դէմ տուած պատերազմաց պատմութիւնն է, որ թէպէտ Յիշատակարոննի կամ Տարեգրի ձև ունի, յիշատակելով ամենօրուան դէպքերը, բայց կատարեալ պատմութիւն մ'է նոյն ժամանակի անցից, որուն գրաւորական յարգը ցուցուց արդէն Տակիտոս՝ ըսելով. « Աստուածայինն Յուլիոս, նա է մեծ քան զամենայն մատենագիրս »:

Կեսարու այս գրուածքին մէջ եթէ կայ պակասութիւն մը՝ այն է որ ուրեք ուրեք չէ այնչափ անաչառ. բայց ուրիշ կողմանէ կատարելութիւնն այնչափ շատ ու գերազանց են, որ նոյն իսկ Լուովմ իր ատենցոյն գրուածքաւ ու սկսաւ պատուել զինքը ոչ միայն իբրև քաղաքագէտ և զօրապետ այլ և իբրև մատենագիր և առաջին պատմագիր Լուովմայեցի. վասն զի ընտիր և ճարտար լեզուով գրուած է, և կը փայլի ամեն իջից մէջ իր գինուորական ոգին, և անոր հետեանք ճշդութիւն և հարկաւորը միայն զուրցելու սովորութիւն, և այն առանց կրից: Դիտելու մէկ բանն այլ այն է որ գրուածքին մէջ ամենևին իր անձին ուչ գրած չէ կեսար, թողով որ իր զօրծնը խօսին իր վրայ: Կեսար կարծես ուրիշ աշխարհակալ կեսարու մը գործերը կը պատմէ, առանց յայտնելու կողմնասիրութեան հոգի՝ որ ամեն պատմագիր ունի առ իւր զիւցազնը:

Յարմար կը դատեմք զնձ հօս կրկերոննի տուած գովութիւնը, որ իր ազգակիցն էր, ժամանակակիցը, թերևս և նախանձնորդէմը. « Յիշատակարանաց գիրքը, կ'ըսէ կրկերոն, գերազանց մատենագրութիւն մ'է, պարզ ու մեկին ճճով, լի վայելու-

թեամբ, ամենայն ընդունայն պերճութիւններէ թօթափած, գեղեցկութիւն մ'առանց պարզարանաց », և այլն:

Լսեմք և Պոսիւէի ըսածն արքայորդւոյն զաստիարակութեան վրայ առ Իննովկենտիոս ծն գրած թղթին մէջ. « Գաղղիոյ թագածառանգը, կ'ըսէ Պոսիւէ, կը զարմանայ կեսարու վրայ, վասն զի գերազանց մարդ մը կը տեսնայ զինքը թէ 'ի գործել և թէ 'ի գրել. անանկ մարդ մը կը համարի, ուսկից միայն արժան է պատերազմի արհեստը սորվիլ »: Եւ յիտաւի, Պոսիւէի ըսածին 'ի հաւատիք կը տեսնեմք որ ոչ միայն արքայորդին, այլ և Գաղղիոյ երկու երեւելի կայսերքն Հենրիկոս Գ և Մեծն Նաբոլէոն մտադրութեամբ կը կարգային կեսարու Յիշատակարանաց գիրքը:

## ՏԵՒԻՏՈՒՄ ԱՌԻՆՈՒՄ, ՊԵՐՄԱՆԻԱ, ԵՒ ՏՐԱՄԱՌՍՈՒԹԻՒՆ ԶԼՈՒՅՈՐՈՍ:

Ագրիկոլա՝ Տակիտոսի գրուածոց մէջ ժամանակաւ կանխագոյնն է: Այս անձն ուրուն կենսագրութիւնը կ'ընէ հոռովմայեցի քաջանուն պատմագիրը, զինու զօրութեամբ հպատակելով գիրեատնս ընդ իշխանութեամբ Լուովմայեցոց, մեծ արդիւնք ուստի և մեծ համբաւ ստացեր էր: Բայց ինքն իր այս ունեցած յայտնութեամբ ըրն ամենևին չի գեղծանկելով, անաչառէր ու խոհական կեանք կ'անցունէր այնպիսի ժամանակ՝ յորում ապականութիւնը զոգցես ողողեր էր հոռովմէական ժողովուրդը: Եւ ահա Տակիտոս պատմեց այս դէպքերն այնպիսի ճշդութեամբ, հաւատարմութեամբ և ընտիր ոճով՝ մինչև ըսել տուաւ լա շարքի թէ այսպիսի կենսագրութիւն և ոչ մէկ սպգի մը մէջ կրնայ գտնուիլ:

Այս գրութեանս մէջ Տակիտոս փափուկ

ու սրտաչարժ ոճ ու լեզու կը գործածէ. յորում ժողովելով մէջ բերած է կենդանի ասացուածովք գերադասոց ու դիւցադնական բարուց նկարագիր մը: Կը տեսնենք անդ խորախորհուրդ խմաստասէր մը՝ որ կը քննէ զմարդ, մտաց մեծ գորուծիւնը մը՝ որ կ'անդրադատնայ ու կը խորհրդածէ, և ճշմարտասօս լեզու մը՝ որ կը նկարագրէ: Այլ փոփած է անդ Տակիտոս և շատ մը կարևոր տեղեկութիւններ Մեծին Իրիտանիոյ աշխարհագրութեան և պատմութեան վրայ:

Գերմանիա կոչուած երկասիրութիւնն Ագրիկոլայի վարուց հետ կամ անկէ քիչ ետքը շարագրած է Տակիտոս. և նպատակն է նկարագրել զինու գորութեամբ հռովմէական պետութեան ահարկու եղող ազգի մ'աշխարհը, բարքը, սովորոյթն ու քաղաքականութիւնը: Գիրքը թէպէտ պզտիկ է, բայց յարգը մեծ. վասն զի կրնամք ըսել որ արդի ազգաց ամենուն պատմութեան ծագումն և սկիզբ մ'է: Անհաւատալի կ'ըսեայ որ ինչպէս այդպէս պզտի գիրք մը այնչափ կարևոր տեղեկութիւններ ամփոփած ըլլայ, որոնք ամենքն ալ ստոյգ են. վասն զի յետ այնչափ դարուց բազմատեղով հիմա իրականին հետ, նոյն կը գտնան բանասէրք:

Տակիտոս թէպէտ գերագանց հանճարոյ ու գրչի տէր էր, սակայն ինչպէս այլք նոյնպէս և ինքը չէր կրնար 'ի նտիապաշարմանց ժամանակին դերժ ըլլալ. և ունեցած գիտութիւնն ալ պէտք էր որ համեմատ ըլլար նոյն ժամանակին: Եւահա այս է պատճառը գրոցը մէջ եղած աշխարհագրական սխալանաց, և մանաւանդ գերմանացոց հին կրօնիցը վերաբերեալ անտողի ու անհիմն տեղեկութեանց: Չի գիտցուիր թէ արդեօք Տակիտոս անձամբ ճանապարհորդեր է 'ի Գերմանիա ու գրեր, և կամ այ-

լոց առած տեղեկութեանցն հետեւր է. սակայն հուանական է որ օգտուած ըլլայ Հռովմայեցի գիտութիւններ և կամ գերմանացի պատանդներէ ու գերիններէ:

Տրամախօսութիւն զՆեւտոնաց ըսուած գրուածքը խօսակցութիւն մ'է 'ի մէջ բարեկամաց. յորք ոմանք քերթողութիւնը նուստ ու անարգ երևցնելով կը ջանան ցուցընել ճարտարիտութեան օգուտները, վայելքն ու փառքը, և այլք ընդհակառակն կը ջանան քերթողականին պաշտպան կալ. և այսպէս կը վիճեն մինչև տրամախօսութեան կէսերը: Կտրը կը խօսին հին և նոր ժամանակաց ատենարանութեան ոճոյն վերայ. և ասոր մէջ ալ կը տարածայնին, կէսք նորոց և այլք հնոց նպատեղով: Ապա խօսին ճշմարիտ ճարտարիտութեան անկման վրայ. և այսպէսով կը վերջացնեն տրամախօսութիւնը:

Թէպէտ Տրամախօսք քիչ մ'երկայնաբան են, բայց հռովմէական մատենագրութեան մէջ քիչ գիրք կայ՝ որ ասոր չափ ձգիչ ու հետաքրքրաշարժ ըլլայ: Ընթերցողը շատ բան կը սորվի այս գրքուկովս. վասն զի ոչ թէ աստ անդ, այլ ամեն իջի և գրեթէ ամեն տողի մէջ այնպիսի հանճար, մտածութիւն, նկարագիր և բացատրութիւններ կը գտնայ որ կը համարուի հեղինակին ըսածին թէ յետ դիւցադանց հին մատենագրութեան, կրնան նորանոր դիւցազունք ալ ծնանիլ: Այս գրուածքն յերուսի թանկագին յիշատակարան մ'է և մատենագրական մեծ գանձ: Շատ գեղեցիկ է այն բաղդատութիւնը զոր կ'ընէ Մեսսուրս ընդ մէջ հին Հռովմայեցոց և նոյն ժամանակի տղայոց տրուած դաստիարակութեան. նշանաւոր է նոյնպէս Ապերի խօսակցութեան մէջ ճարտարիտութեան գովութիւնը:

